տարաններու կտաւներն (շուշպայ) այնչափ շատ են, որ հազիւ մի ժամից մարդ կարող կը լինի բանալ։

Ոմանք շահու աղբիւր դարձուցած են այդ Ս. Գիրքը, որի համար եղբարց մէջ շատ անդամ կռիւ յարուցուած է իւրացնելու։

ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ. — Վաղարշակերտու «Դաւիթի տան աւետարանն» շատ հին մագաղաթեայ աւետարան է, տեղացւոց մեծ երդումը «Դաւիթի տան աւետարան»ի վերայ է։

Այս աւետարանը շատ հին է՝ դժուար ընթեռնելի. տեսնողներէն ոմանք Ս. Մեսրովպի ժամանակից գրուած կը կարծեն. ունի աւետարանի գրով գրուած մի ընդարձակ յիշատակարան. շատ աշխատած եմ որպէս զի տեղեակով կարողանամ կարդալ, չեմ օրինակած, յուսալով որ տէրը թոյլ կտայ երկար որոճամ ու գրի առնեմ, սակայն տէրը չզիջաւ, մեծ հատուցում պահանջեց։

Գրած եմ միայն մի քանի յիշատակարաններն՝ որք վերջի դարերուն կը պատկանին։

Կարմիր Աւետարանի կողերն արծաթապատ են. արծաթեայ շղթաներով։ Արծաթի վերայ գեղեցիկ պատկերներ փորագրուած, որ տեսնողին պատկառանք կազդէ։ Փորագրուած է Քրիստոսի խաչելութիւնը, երկու կողմերն երկու Մարիամներն կանգնած՝ խաչին կը նային, խաչի ոտի տակ Ադամայ գլխի կմախքն, գլխու երկու քովերն երկու հրեշտակներ ձեռքերնին երկու սկիհ՝ որք հոսած արեան կաթիլներու տակ են բռնած. գլխու վերևն արծաթը քառակուսի դուրս ցցուած, որոց վերայ ունի փորագրուած «Յս. Ն. Թ. Հթ.»։